Այդ միջոցին բակում յայտնոեցաւ մի այլ ստոեր, նա ցած իջաւ կտուրից, ես լսեցի նրա ոտնաձայնը: Արագ քայլերով մտաւ նա սրահը: Ես իսկոյն ճանաչեցի Ծովիկին: Տեսնելով մօրը ինձ մօտ, բացականչեց նա.

— Ա՜խ, աստոած, այդ ո՞վ բաց արաւ դուռը:

Երեւում էր, որ նա կտուրից լսել էր մօր ձայնը եւ ցած էր իջել նրան օգնելու: Նա բռնեց գիշերաշրջիկ լուսնոտի ձեռքից եւ, առանց մի խօսք ասելու, տարաւ դէպի իր սենեակը: Մայրը առանց ընդդիմութեան հետեւեց նրան: Մի ուրիշը նրա տեղ՝ կարող էր վախենալ, կարող էր աղաղակել, բայց մանկահասակ աղջիկը, որպէս տեսնում էի, բոլորովին ընտելացած էր մօր հիւանդոլթեանը եւ գիտէր, թէ ինչպէս պէտք էր վարոել նրա հետ: Երբ նա տարաւ, հանգստացրեց մօրը եւ դուռը կողպելով եկաւ ինձ մօտ՝ ես նրանից հարցրի.

— Քո մօր հետ ամէ՞ն գիշեր այդպէս է պատահում:

— Երբեմն միայն, — պատասխանեց նա տխուր ձայնով, — աւելի լուսընկայ գիշերներում: Այդ ժամանակ հայրս միշտ նրա մօտ է լինում, հսկում է նրան: Ա՜խ, ո՞ւր է գնացել այս գիշեր, չէ երեւում:

— Նա, կարծեմ, հիւսնի արհեստանոցումն է:

Ծովիկը դիմեց դէպի արհեստանոցը՝ հօրը կանչելու համար:

— Սպասի՛ր, միասին գնանք:

Նա կանգնեց: Ճանապարհին հարցրի նրանից.

— Քո մայրը ինչ-որ արեան վրայ էր խօսում: Այդ ի՞նչ արիւն է:

— Չեմ իմանում, նա միշտ այդ է ասում, երբ նրա հետ պատահում են այսպիսի բաներ... Հայրս չէ թողնում, որ մենք լսենք, նա մեզ հեռացնում է...

— Դու եւ. Քոթոթը չէ՞ք վախենում, երբ նա այդպէս բաներ է խօսում:

— Ինչո՞ւ պէտք է վախենանք: Նա մեր մայրն է: Բայց հարեւանները վախենում են, ասում են, թէ դեւերը ման են ածում նրան:

— Նա մի՞շտ այդպէս խօսում է:

— Շատ անգամ ոչինչ չէ խօսում, լուռ դուրս է գալիս սենեակից, պտտւում է բակի մէջ, մտնում է պարտէզը, յետոյ գնում է ծովեզրը: Այնտեղ ժամերով կանգնում է եւ երկար, անխօս նայում է ծովին:

Խե՜ղճ աղջիկ, եթէ նա գիտենար, թէ որպիսի ցաւեր են թաքնոած դժբախտ մօր սրտում: Ես ոչինչ չասեցի: Մենք մօտեցանք հիւսնի արհեստանոցին: Ասլանը նստած էր ճրագի մօտ, իսկ նրա հանդէպ՝ ծերունի արհեստաւորը: Երկուսի մէջտեղում դրած էր մի լայն տախտակ, որ ծառայում էր սե-